

Հրատարակվում է

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ

SPONSORED BY
THE COUNCIL OF EUROPE

ASSOCIATION OF JUDGES OF THE REPUBLIC OF ARMENIA

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS

COLLECTION OF JUDGMENTS

Edited by Alvina Gyulumyan

Member of the Constitutional Court of the Republic of Armenia,

President of the Association of Judges of the RA

YEREVAN 2002

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ**

ՎՃԻՌՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀՀ սահմանադրական դատարանի անդամ,
ՀՀ Դատավորների միության նախագահ
Ալվինա Գյուլումյանի ընդհանուր խմբագրությամբ

ԵՐԵՎԱՆ 2002

**Տպագրվում է ՀՀ Ռատավորների միության
խորհրդի որոշմամբ**

Խմբագիր

**ՀՀ սահմանադրական դատարանի
աշխատակազմի գլխավոր մասնագետ
Լիանա Հակոբյան**

Վճիռներն անգլերենից թարգմանել են.

Լուսինե Պողոսյանը
Մարինա Մխիթարյանը
Կարինե Բալայանը
Սոնա Հովհաննիսյանը
Վահե Ենգիբարյանը
Աննա Ղազարյանը

ԴՈՍԲՈՒ ԲԵՅԻՐՆ ԸՆԴԴԵՄ ՆԻԴԵՈԼԱՆԴՆԵՐԻ ԳՈՐԾԸ
CASE OF DOMBO BEHEER

Դատարանի 1993թ. սեպտեմբերի 22-ի վճիռը

Ստրասբուրգ

Դոմբո Բեհիր Բ.Վ.-ն ընդդեմ Նիդեռլանդների գործով,
Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Մարդու իրավունքների եւ
հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի
(«Կոնվենցիա») 43-րդ հոդվածի եւ Դատարանի կանոնակարգի
համապատասխան դրույթների համաձայն միստ գումարելով որպես Պալատ`
դատավորների հետեյալ կազմով. պրն Ռ. Ռիսդալ, Նախագահ, պրն Ռ.
Բերնհարդտ, պրն Լ.-Ե. Փետիտի, պրն Բ. Ուոլշ, պրն Ս.Կ. Մարտենս, պրն Ի.
Ֆոյգել, պրն Ռ. Պեկանեն, պրն Մ. Ա. Լոպես Ռոշա, պրն Գ. Սիֆսուդ Բոնիցի,

ինչպես նաեւ Մ.-Ա. Էյսեն, Քարտուղար, եւ պրն. Զ. Փեթցոլը, Քարտուղարի
տեղակալ,
1993 թ. ապրիլի 23-ին եւ սեպտեմբերի 22-ին դռնփակ խորհրդակցություն
անցկացնելով`
1993 թ. սեպտեմբերի 22-ին կայացրեց հետեյալ վճիռը:

Վարույթը

1. Գործը Դատարան է հանձնվել 1992թ. հոկտեմբերի 26-ին` Մարդու
իրավունքների եվրոպական հանձնաժողովի («Հանձնաժողով») կողմից,
Կոնվենցիայի 32-րդ հոդվածի 1-ին կետով եւ 47-րդ հոդվածով նախատեսված
եռամսյա ժամկետում: Գործի համար առիթ է հանդիսացել 1988թ. օգոստոսի
15-ին Դոմբո Բեհիր Բ. Վ. սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերության (Նիդեռլանդների օրենսդրության համաձայն իրավաբանական
անձի կարգավիճակ ունեցող) կողմից 25-րդ հոդվածի հիման վրա ընդդեմ
Նիդեռլանդների Թագավորության Հանձնաժողովին ուղղված գանգատը (թիվ
14448/88):

Հանձնաժողովի պահանջը հիմնվում էր 44-րդ եւ 48-րդ հոդվածների, ինչպես
նաեւ Նիդեռլանդների կողմից Դատարանի պարտադիր իրավագործությունը
ճանաչող (46-րդ հոդված) հայտարարության վրա: Պահանջի նպատակն էր
որոշում կայացնել առ այն, թե արդյոք գործի փաստերը վկայում են
պատասխանող պետության կողմից 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված
իր պարտավորությունների խախտման մասին:

2. Ի պատասխան Կանոնակարգի 33-րդ կանոնի 3 (դ) կետի համաձայն արված հարցման՝ դիմող ընկերությունը ցանկություն էր հայտնել մասնակցելու դատավարությանը եւ նշանակել է այն փաստաբանին, որը կներկայացներ իր շահերը (կանոն 30): 1993թ. մարտի 1-ին Նախագահը թույլատրել է օգտագործել հոլանդերենը (կանոն 27, կետ 3):

3. Ձեւավորվող պալատի կազմում էին, ex officio Նիդեռլանդներից ընտրված դատավոր պրն Ս. Կ. Մարտենսը (Կոնվենցիայի 43-րդ հոդված) եւ պրն Ռ. Ռիսդալը՝ Դատարանի Նախագահը (կանոն 21, կետ 3 (բ)): 1992թ. հոկտեմբերի 30-ին Նախագահը, Քարտուղարի ներկայությամբ, վիճակահանությամբ ընտրել է մյուս 7 անդամներին, որոնք էին պրն Լ-Ե. Փետիտին, պրն Բ. Ուոլշը, պրն Ի. Ֆոյգելը, պրն Ռ. Պեկանենը, պրն Մ. Ա. Լոպես Ռոշան, պրն Գ. Միֆսուդ Բոնիցին եւ պրն Բ. Ռեպիկը (Կոնվենցիայի 43-րդ հոդված եւ 21-րդ կանոն, կետ 4): 1993թ. հունվարի 1-ից փոխարինող դատավոր պրն Ռ. Բերնհարդտը փոխարինել է պրն Ռեպիկին, որի պաշտոնավարության ժամկետը լրացել էր Չեխոսլովակիայի Հանրապետության փլուզման արդյունքում (Կոնվենցիայի 38-րդ հոդված եւ 65-րդ հոդվածի 3-րդ կետ եւ 22-րդ կանոն, կետ 1, 24-րդ կանոն, կետ 1):

3. Որպես պալատի Նախագահ (կանոն 21, կետ 5) պրն Ռիսդալը Քարտուղարի միջոցով խորհրդակցել է Նիդեռլանդների կառավարության ներկայացուցչի («Կառավարություն»), դիմողի փաստաբանի եւ Հանձնաժողովի պատվիրակի հետ՝ դատավարության կազմակերպման կապակցությամբ (կանոն 37, կետ 1 եւ կանոն 38): Համաձայն կարգադրությունների՝ Քարտուղարը 1993թ. մարտի 1-ին ստացել է դիմողի գրավոր բացատրությունները, իսկ 1993թ. մարտի 4-ին՝ Կառավարության գրավոր բացատրությունները: Հանձնաժողովի քարտուղարը տեղեկացրել է Քարտուղարին, որ Հանձնաժողովի պատվիրակը կներկայացնի իր բացատրությունները լսումների ժամանակ:

4. 1993 թ. մարտի 1-ին Հանձնաժողովն իր մոտ ունեցած գործից տրամադրել է որոշ փաստաթղթեր, որոնք, դիմող ընկերության պահանջի համաձայն, պահանջել էր Քարտուղարը:

5. Համաձայն Նախագահի որոշման՝ գործի լսումը տեղի է ունեցել դռնբաց նիստում՝ Մարդու իրավունքների պալատում, Ստրասբուրգում, 1993թ. ապրիլի 21-ին: Մինչ այդ Դատարանը գումարել էր նախապատրաստական նիստ:

Դատարանում հանդես են եկել.

ա) Կառավարության անունից՝
պրն Կ. դե Վեյ Մեստդադ, Արտաքին գործերի նախարարություն,
ներկայացուցիչ,
պրն Ի. Լ. դե Վիջկերսլուց դե Վեերդեշտայն, landsadvocaat, փաստաբան,
պրն Փ.Ա.Մ. Մեյջկենխտ, Արդարադատության նախարարություն,
խորհրդակալ.

բ) Հանձնաժողովի անունից՝
տկն Ջ. Լիդի, պատվիրակ.

գ) դիմողի անունից՝
պրն Դ. Ծ. Բայվանք, advocaat en procureur, փաստաբան:

Դատարանը լսել է Կառավարության անունից՝ պրն Ի.Լ. դե Վիջկերսլուց դե Վեերդեշտայնի, Հանձնաժողովի անունից՝ տկն Ջ. Լիդիի եւ դիմողի անունից՝

պրն Դ. Ծ. Բայվանքի ելույթները, ինչպես նաև Դատարանի անդամներից մեկի հարցերին նրանց պատասխանները:

Փաստերի վերաբերյալ

I. Գործի առանձին հանգամանքները

6. Դիմողը (այսուհետ՝ «Դոմբո») համաձայն Նիդեռլանդների օրենսդրության՝ հանդիսանում է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն. այն 1958 թ. հիմնված հանրային սահմանափակ ընկերության իրավահաջորդն է (naamloze vennootschap): Ընկերության գրասենյակը գրանցված է Նիջմեգենում: Քննության առարկա ժամանակահատվածում Դոմբո ընկերությունը բաժնետոմսեր ուներ մի շարք այլ ընկերություններում, որոնց կառավարումն իրականացնում էր ինքը, վերջիններս զբաղվում էին կոմերցիոն գործունեությամբ: Դոմբո ընկերությունում բաժնետոմսերը տնօրինում էր բաժնետոմսեր թողարկող կազմակերպության նախագահ պրն Դ. Ց. վան Ռեյչենդանը (stichting):

Պրն Դ. Ց. վան Ռեյչենդանը մտնում էր նաև ընկերության ղեկավարության մեջ, նա 1963թ.-ից հանդիսանում էր ընկերության միակ գործադիր տնօրենը (տես կետ 15)՝ չհաշված 1981թ. փետրվարի 4-ից 1981թ. մարտի 23-ն ընկած ժամանակահատվածը, երբ նա հեռացված էր այդ պաշտոնից եւ նրան ժամանակավորապես փոխարինում էին պրն Ց.Յու.-ն եւ տկն վան Լ.-ն:

7. Քննության առարկա ժամանակահատվածում Դոմբոն բանկային գործարքները կատարում էր Nederlandsche Middenstandsbank N.V. -ի (այսուհետեւ «Բանկ») հետ՝ Նիջմեգենում գտնվող իր մասնաճյուղի միջոցով: Այդ մասնաճյուղի կառավարիչն էր ոմն պրն վան Վ.-ն., ով, համաձայն Բանկի կանոնադրության, չէր կարող ի պաշտոնե համարվել Բանկի կառավարիչը եւ, Բանկը ներկայացնելու նրա լիազորությունները, որը ներառում է որոշակի չափը գերազանցող քանակով վարկ վերցնելու վերաբերյալ թույլտվություն տալը, խիստ սահմանափակ էին:

Դոմբոյի եւ Բանկի միջեւ գործում էր մի համաձայնագիր, ըստ որի՝ Դոմբոն եւ իր մասնաճյուղերն իրավունք ունեին ընթացիկ հաշվեհամարում ունենալու վարկային հաշիվ, այսինքն՝ նրանք հնարավորություն ունեին գերազանցելու իրենց բանկային հաշիվներում եղած գումարը: 1980թ. օգոստոսին վարկ

վերցնելու այս հնարավորությունը կազմում էր 500,000 հոլանդական գուլդեն՝ գումարած լրացուցիչ 250,000 գուլդենի ժամանակավոր հնարավորությունը: Այս համաձայնագիրը պաշտոնական բնույթ էր ստացել այդ կապակցությամբ ձեռք բերված բանավոր պայմանավորվածության գրավոր հաստատմամբ եւ 1980թ. օգոստոսի 11-ին կնքված պայմանագրով, ըստ որի՝ Բանկը բացում է համատեղ հաշվեհամար (compte-jointovereenkomst) Դոմբոյի եւ նրա մասնաճյուղերի անունով, որոնք ստանձնում են համապարտ եւ զատ-զատ պատասխանատվություն՝ Բանկի առջեւ իրենց պարտավորություններում:

8. 1980 թ. դեկտեմբերից մինչեւ 1981թ. փետրվարն ընկած ժամանակահատվածում Դոմբոյի եւ Բանկի միջեւ վեճ է ծագել՝ կապված իրենց ֆինանսական փոխհարաբերությունների հետ: Քաղաքացիական դատավարության ժամանակ երկու կողմերն էլ ներկայացրել են փաստարկներ, որոնք հիմնական կետերում էապես տարբերվում էին:

9. Դոմբոյի ներկայացրած փաստարկները կարելի է ընդհանրացնել հետևյալ կերպ.

ա) 1980թ. դեկտեմբերի սկզբին Բանկը Նիջմեզենի իր մասնաճյուղի տնօրեն պրն վան Վ.-ի միջոցով բանավոր կերպով համաձայնել է վարկային հաշվի գումարային հնարավորությունն ընդլայնել 1,600,000 գուլդենից մինչեւ 2,100,000: Ինչպես պրն Յ. Յ. վան Ռեյջենդամը բացատրել էր պրն վան Վ.-ին, Դոմբոն ուներ այս ընդլայնման կարիքը, քանի որ պետք է ստանձներ ինչ-որ սնանկացած «Օ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կոմերցիոն գործարքները. պետք էր գործել անհապաղ: Այս բանավոր համաձայնությունը պետք է պաշտոնական բնույթ ստանար ավելի ուշ, այդ ժամանակ, այնուամենայնիվ, պրն վան Ռեյջենդամը գրավոր համաձայնություն էր տվել երաշխավոր լինելու Դոմբոյի եւ իր մասնաճյուղերի համար՝ 350,000

գուլդենի դիմաց: 1980թ. օգոստոսի 11-ի համաձայնագրի այս փոփոխությունից հետո Դոմբոն Բանկում բացել է հաշվեհամար, որը նախատեսված էր «Օ»-ի բաժնետոմսերը ձեռք բերելու համար, իսկ Բանկն իր հերթին մի շարք առիթներով ակրեդիտիվ էր տրամադրել:

բ) 1981թ. հունվարի սկզբին Դոմբոյին հնարավորություն է ընձեռվել ձեռք բերելու ֆինանսական դժվարություններ կրող եւս երկու այլ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների՝ Թ-ի եւ Դ-ի բաժնետոմսերի փաթեթը: Այս ընկերությունների բաժնետոմսերը ձեռք բերելու համար Դոմբոն խնդրել է վարկային հաշվի հնարավորության եւս մեկ ընդլայնում: Սա քննարկվել է պրն վան Ռեյչենդամի եւ պրն վան Վ.-ի միջեւ: Այդ քննարկումներից հետո 1981թ. հունվարի 22-ին Բանկը Դոմբոյին գրավոր առաջարկ է արել ընդլայնել վարկային հաշվի հնարավորությունը մինչեւ 5,000,000 գուլդեն: Ակնկալելով ընդլայնման այս հնարավորությունը՝ Բանկը Դոմբոյին վճարել է 350,000 գուլդեն՝ Թ. եւ Դ. ընկերությունների բաժնետոմսերը ձեռք բերելու համար, իսկ հետագայում համաձայնել է, որ պրն վան Ռեյչենդամը հաշվից հանի եւս 100,000 գուլդեն՝ այդ նույն նպատակով: Պրն վան Վ.-ն այս գումարի դիմաց պահանջել է երաշխավորություն՝ գրավի ձեւով, եւ ստիպել է պրն վան Ռեյչենդամին ստորագրել լիազորագրի ձեւաթղթի վրա: Օգտագործելով այս փաստաթուղթը՝ Բանկը, նոտարի միջոցով վավերացնելով այս փաստաթուղթը, գրավ է վերցրել Դոմբոյին, նրա մասնաճյուղերին եւ անձամբ պրն վան Ռեյչենդամին պատկանող ամբողջ անշարժ գույքը: Այս գրավը երաշխիք էր 1,600,000 գուլդենի դիմաց, այսինքն՝ այն եւս մեկ անգամ ապահովել է վարկային հաշվի ընդլայնման հնարավորությունը, որի մասին նշվել էր (ա) կետում:

գ) 1981թ. հունվարի 28-ին Բանկը՝ ի դեմս պրն վան Վ.-ի, անսպասելիորեն եւ առանց որեւէ բացատրության կորցրել է իր վստահությունը պրն վան Ռեյչենդամի նկատմամբ, պահանջել է, որ նա հրաժարական տա եւ սառեցրել է Դոմբոյի բոլոր հաշիվները՝ առանց զգուշացման: Եւ այս ամենը կատարվել է չնայած այն փաստին, որ Դոմբոյի պարտքը կազմում էր ընդամենը 783,436.06 գուլդեն, այն դեպքում, երբ վարկային հնարավորության համաձայնեցված գումարը կազմում էր 2,100,000 գուլդեն:

10. Բանկի ներկայացրած փաստարկները կարելի է ընդհանրացնել հետևյալ կերպ.

ա) Բանկն ընդունել է, որ Դոմբոն խնդրել էր վարկային հաշվի ավելի բարձր չափ՝ կապված «Օ» ընկերության բաժնետոմսերը ձեռք բերելու հետ: Բանկը սկզբունքորեն համաձայնել էր դրան, բայց Դոմբոյից պահանջել էր որոշակի լրացուցիչ տեղեկություններ, այդ թվում նախորդ տարվա (1979) տարեկան հաշվետվությունը: Բանկն այն չէր ստացել եւ, հետեւաբար, չէր համաձայնել վարկային հաշվի հնարավորության ընդլայնմանը: Այնուամենայնիվ, կապված «Օ» ընկերության բաժնետոմսերը ձեռք բերելու (որին Բանկն սկզբունքորեն հավանություն էր տվել) եւ ֆինանսական միջոցների անհապաղ անհրաժեշտության հետ՝ Բանկը համաձայնել էր Դոմբոյին հնարավորություն տալ գործելու վարկային հաշվի ընդլայնման ակնկալիքով՝ մի շարք առիթներով նրան ակրեդիտիվ տրամադրելով: Բանկը պրն վան Ռեյչենդամին խնդրել էր անձամբ երաշխավոր լինել՝ 350,000 գուլդեն գումարի դիմաց: 1981թ. հունվարի վերջին Բանկը պարտք էր 848,000 գուլդեն: Բանկը նշում է, որ ակրեդիտիվի եւ ընթացիկ վարկային հաշվի վերաբերյալ համաձայնագրի համաձայն վարկի միջեւ առկա է տարբերություն, առաջինը վերաբերում է ոչ

պարբերական եւ կարճաժամկետ ռիսկի, իսկ վերջինս՝ ավելի մշտական եւ երկարաժամկետ ռիսկի.

բ) Բանկն ընդունել է նաեւ վարկային հաշվի հնարավորության ընդլայնման՝ Դոմբոյի երկրորդ խնդրանքը՝ կապված «Թ» եւ «Դ» ընկերությունների բաժնետոմսերը ձեռք բերելու հետ: Այս առումով պրն վան Ռեյչենդամը նշել է, որ այլոք երաշխավոր կլինեն ամենաքիչը 2,000,000 գուլդենի համար: Սրա հիման վրա 1981թ. հունվարի 22-ին Բանկն սկզբունքորեն համաձայնություն է տվել Դոմբոյին՝ վարկային հաշվի հնարավորությունն ընդլայնելու մինչեւ 5,000,000 գուլդեն՝ պայմանով, որ կստանա տարեկան հաշվետվությունները եւ այլ երաշխիքներ: Սակայն ոչ տարեկան հաշվետվությունները եւ ոչ էլ երաշխիքներ չեն ստացվել, ուստի 1981 թ. մարտի 19-ին Բանկը տեղեկացրել է Դոմբոյին առաջարկի չեղյալ հայտարարման մասին:

Բանկն ընդունել է, որ փոխանցել է 350,000 գուլդեն, բայց հրաժարվել է, որ տեղյակ է եղել, թե ինչի համար է այդ գումարը նախատեսված եղել: Բանկը պնդել է, որ պրն վան Ռեյչենդամը մոլորության մեջ է գցել իրեն այս կապակցությամբ: Միեւնույն ձեւով Բանկը բացատրել է 100,000 գուլդեն գումարի դուրսգրման փաստը: Բանկն իրեն շփոթության մեջ գցելու այս փաստի վերաբերյալ նշել էր 1981թ. մարտի 19-ի նամակում, որտեղ եւ նշել է, որ չեղյալ կհամարի վարկային համաձայնագիրը (որը նա, այնուամենայնիվ, դեռ շարունակում էր ճանաչել), եթե պրն վան Ռեյչենդամը շարունակեր մնալ որպես Դոմբոյի գործադիր տնօրեն (տես ստորել՝ (գ) ենթակետ):

Բանկը պնդել է, որ ինքը պահանջել է գրավ՝ որպես երաշխիք վերը՝ (ա) ենթակետում նշված ակրեդիտիվի, ինչպես նաեւ վերը նշված 350,000 եւ 100,000 գուլդենի դուրսգրման դիմաց: Գրավը հաստատվել է նոտարի կողմից վավերացված լիազորագրի միջոցով եւ, ինչպես փաստաթուղթն է վկայում,

նոտարն այն կարդացել է բարձրաձայն մինչ արն վան Ռեյջենդամի ստորագրելը: Բանկը ժխտել է դատարկ ձեւաթղթի վրա ստորագրելու փաստը.

զ) Բանկը կտրականապես մերժել է, թե իբր 1981թ. հունվարի 28-ին սառեցրել է Դոմբոյի հաշիվները: Այս հաշիվներից հանած գումարները, միեւնույն է, գերազանցել էին համաձայնեցված 750,000 գուլդեն սահմանը, եւ հաշվեկշիռը կազմում էր 784,657.75 գուլդեն դեբեդ: Եւ, այնուամենայնիվ, Բանկը հստակորեն նշել է, որ այդ խաբեությունից հետո արն վան Ռեյջենդամն այլեւս վստահություն չէր ներշնչում: Դոմբոն կառավարելու նրա համապատասխանության վերաբերյալ Բանկի տարակուսանքը հետագայում հաստատվել է այն բանից հետո, երբ արն վան Ռեյջենդամը 1981թ. փետրվարի 4-ից մինչեւ նույն թվականի մարտի 23-ը ժամանակավորապես հեռացվել է իր պաշտոնից եւ դատարանի հրամանով ուղարկվել հոգեբուժարան: Նշված ժամանակահատվածում Բանկը շարունակել է իր գործունեությունը Դոմբոյի հետ՝ տարբեր գործադիր տնօրենների օրոք, որոնք էին արն Յ. Յու-ն եւ տկն վան Լ-ն: Այն շարունակել է վարկեր տրամադրել՝ ֆինանսավորելու համար «Օ» ընկերության բաժնետոմսերի ձեռքբերումը: Պրն վան Ռեյջենդամի վերադարձից հետո Բանկը Դոմբոյին տվել է ցանկացած հնարավորություն, որպեսզի վերջինս նվազեցնի պարտքը: Բայց երբ պարզ է դարձել, որ արն վան Ռեյջենդամը չի պատրաստվում անել այդ, Բանկը չեղյալ է համարել վարկային համաձայնագիրը 1981թ. հոկտեմբերի 30-ից սկսած: Միայն դրանից հետո Բանկը սառեցրել է հաշիվները:

II. Դատավարությունը ներպետական դատարաններում

12. 1983թ. մարտի 11-ին Դոմբոն դատական կարգադրության համաձայն օգտագործում է որոշ գումարներ, որ դեռևս պարտք էր Բանկին, եւ հրավիրում է նրան Արնհեմի շրջանային դատարան (arrondissementsrechtbank)՝ իր պարտավորությունները չկատարելու հետեւանքով պատճառած վնասի դիմաց Բանկից պահանջելով ֆինանսական փոխհատուցում:

13. Ծավալուն գրավոր փաստարկներ ներկայացնելուց հետո, որոնցում յուրաքանչյուր կողմը 3 անգամ ներկայացրել է իր պահանջները եւ բավականաչափ փաստաթղթեր, Դոմբոն առաջարկել է ներկայացնել վկաների (մասնավորապես՝ գործադիր տնօրենների պրն Յ.Յու-ն եւ տկն վան L-ն, որոնք ժամանակավորապես փոխարինում էին պրն վան Ռեյջենդամին, եւ նրանք ներկայացել էին ապացուցելու, որ այդ ժամանակահատվածում բանակցություններ էին ընթանում վարկային հնարավորության սահմանը 2,100,000 գուլդենից մինչեւ 2,600,000 գուլդեն բարձրացնելու վերաբերյալ), շրջանային դատարանը 1984թ. փետրվարի 2-ին ժամանակավոր որոշում է կայացրել՝ թույլատրելով Դոմբոյին ներկայացնել վկաներ՝ ապացուցելու համար, նախեւառաջ, որ Բանկը սառեցրել էր Դոմբոյի հաշիվները 1981թ. հունվարի 28-ին, եւ երկրորդ, որ առկա վարկային համաձայնագիրը 1980թ. դեկտեմբերին ընդլայնվել էր 1,600,000 գուլդենով: Ի հավելումն սրան, շրջանային դատարանը կարգադրել է, որ դատավորներից որեւէ մեկին անձնապես ներկայանան Դոմբոյի եւ Բանկի իրազեկ եւ հաշտության համաձայնություն կնքելու լիազորություններով օժտված ներկայացուցիչներ (comparitie):

14. Բանկն այս ժամանակավոր որոշումը բողոքարկել է Արնհեմի վերաքննիչ դատարան (gerechtshof)՝ փաստարկելով, որ Դոմբոյի հայցը պետք է մերժվեր միանգամից: Ըստ Բանկի՝ Դոմբոն հրաժարվել էր իր հայցի նախնական

հիմնավորումից, եւ այն հիմնավորումը, որը նա բերում էր, ակնհայտորեն չէր համապատասխանում նախնականին: Բացի դրանից, Դոմբոն ոչ մի շահ չէր հետապնդում այդ հայցով, եւ շրջանային դատարանի՝ վկաներ պահանջելու որոշումը շատ անորոշ եւ միակողմանի էր:

Կողմերի՝ գրավոր փաստարկներ եւ փաստաթղթեր ներկայացնելուց, ինչպես նաեւ բանավոր միջնորդություններ անելուց հետո (Դոմբոն պնդում էր վկաներ բերելու իր առաջարկը) վերաքննիչ դատարանը 1985թ. հունվարի 8-ի որոշումով մերժել է Բանկի կողմից բերված փաստարկները եւ հաստատել շրջանային դատարանի որոշումը:

Կողմերի խնդրանքով վերաքննիչ դատարանը գործը հետ չի ուղարկել շրջանային դատարան, եւ ինքն է ստանձնել գործի քննությունը: Ուստի, վկաների հարցաքննությունը նշանակվել է 1985թ. փետրվարի 13-ին՝ դատավոր պրն վան Ե.-ի կողմից, բայց կողմերի ներկայացուցիչների անձնապես դատարան ներկայանալու օրվա նշանակումը հետաձգվել է մինչեւ վկաների հարցաքննությունը:

15. Դոմբոն կանչել է մի շարք վկաներ, այդ թվում նաեւ պրն վան Ռեյջենդամին: Ներկայացնելով 1984 թ. հունիսի 29-ի՝ բաժնետերերի միստի արձանագրությունները՝ Դոմբոն պնդել է, որ պրն վան Ռեյջենդամին պաշտոնից հեռացնելու պատճառը եղել է նրա «ֆինանսական միջոցների բացակայությունը»: Այնուհետեւ ներկայացվել է մի փաստաթուղթ, ըստ որի՝ 1984 թ. նոյեմբերի 29-ի դրությամբ պրն վան Ռեյջենդամը գրանցված է եղել որպես աշխատանք փնտրող գործազուրկ, եւ քաղվածք ընկերության կոմերցիոն մատյանից, ըստ որի՝ 1984թ. դեկտեմբերի 10-ին Դոմբոյի գործադիր տնօրեն է նշանակվել մեկ այլ անձ:

16. Բանկն առարկել է պրն վան Ռեյջենդամին լսելու դեմ: Առարկության համար հիմք է հանդիսացել այն նորմը, ըստ որի՝ գործով կողմ հանդիսացող անձը չի կարող միեւնույն ժամանակ ներկայանալ որպես վկա (տես ստորել՝ կետեր 23, 25-26): Բանկը պնդել է, որ պրն վան Ռեյջենդամի պաշտոնանկությունն իրավիճակի վրա ազդեցություն չի ունեցել, սակայն միայն նրան զրկել է վկայություն տալու հնարավորությունից:

1985թ. փետրվարի 12-ին դատավոր վան Ե.-ն ընդունել է Բանկի այս առարկությունը եւ մերժել է լսել պրն վան Ռեյջենդամին՝ որպես վկա: Դատավորը համոզվել է, որ եւ պրն վան Ռեյջենդամի պաշտոնանկությունը, եւ նոր գործադիր տնօրենի նշանակումը կեղծ էին (schijnhandelingen), որի նպատակը ոչ այլ ինչ էր, քան հնարավորություն տալ պրն վան Ռեյջենդամին վկայելու ընթացիկ դատավարությունում: Նա նշել է, որ պրն վան Ռեյջենդամը 1984 թ. հոկտեմբերի 30-ին ներկա է եղել վերաքննիչ դատարանում բանավոր լսումների ժամանակ եւ չի առարկել, երբ Դոմբոյի փաստաբանը հիշատակել է նրան որպես Դոմբոյի գործադիր տնօրեն: Դատավորը նաեւ ավելացրել է, որ իր կարծիքով՝ պաշտոնանկության ենթադրյալ դրդապատճառները համոզիչ չեն:

Դոմբոյի մյուս վեց վկաների հարցաքննությունը տեղի է ունեցել 1985թ. փետրվարի 13-ին եւ 20-ին: Նրանցից մեկի՝ պրն Յ.Յու-ի հարցաքննությունը տեղի է ունեցել եւ փետրվարի 13-ին, եւ 20-ին: Այս վկան 1977թ. կեսերից մինչեւ 1980թ. մայիսը Դոմբոյի ֆինանսական գործերի կառավարիչն էր, եւ դրանից հետո էլ պահպանում էր կապն ընկերության հետ՝ արդեն որպես արտաքին հարցերով խորհրդական: 1980թ. նոյեմբեր եւ դեկտեմբեր ամիսների ընթացքում նա ակտիվորեն մասնակցում էր Դոմբոյի կառավարմանը, եւ դա էլ հենց պատճառ հանդիսացավ, որպեսզի նա պրն վան Ռեյջենդամի

հեռանալուց հետո նշանակվի ընկերության կանոնադրական գործադիր տնօրեն (տես վերը կետ 11, ենթակետ (գ)): Փետրվարի 13-ին պրն Յ.Յու-ն, inter alia, նշել է, որ նա 1980թ. նոյեմբերից մինչև 1981թ. հունվարի 28-ի ընթացքում ներկա է եղել կողմերի միջև մի շարք հանդիպումների, եւ որ չնայած չի կարող վերհիշել ճշգրիտ խոսքերը, բայց հստակորեն մտաբերում է, որ պրն վան Վ.-ն ասել է մոտավորապես հետևյալը. «Առայժմ որպես ելակետ կընդունենք 1,600,000 գուլդեն վարկը»: Արդեն երկրորդ հարցաքննության ժամանակ, որը նշանակվել էր Դոմբոյի խնդրանքով, նա ուղղել է իրեն եւ նշել, որ բացի 500,000 գուլդեն սկզբնական վարկային հնարավորությունից, համաձայնություն է ձեռք բերվել 1,600,000 գուլդեն նոր վարկային հնարավորության մասին, որպեսզի Դոմբոն կարողանա իրականացնել հիմնականում «Օ.», ինչպես նաեւ «Թ.» ընկերությունների բաժնետոմսերի ձեռքբերումը: Այս վկայի մասնակցությամբ մի շարք քննարկումներ են տեղի ունեցել, որոնց ժամանակ քննարկվել է վարկային հնարավորության ընդլայնման չափը:

17. Բանկը, իրականացնելով ի պատասխան (contra-enquete) վկաներ կանչելու իր իրավունքը, ներկայացրել է իր երկու աշխատակիցներին, այդ թվում՝ Նիջմեգենի մասնաճյուղի կառավարիչ պրն վան Վ.-ին:

Դոմբոն առարկել է պրն վան Վ.-ի հարցաքննության դեմ՝ նշելով, որ վարկային փոխհարաբերությունների բոլոր փուլերում, ինչպես նաեւ ընթացիկ դատավարության ողջ ընթացքում նա հանդես է եկել որպես Բանկի ներկայացուցիչ, եւ եթե միեւնույն բանի համար պրն վան Ռեյջենդամին մերժվեց հանդես գալու որպես վկա, ապա քաղաքացիական դատավարության ժամանակ կողմերի միջև արդարության պահպանման համար պրն վան Վ.-ն նույնպես պետք է չլսվի որպես վկա:

18. 1985թ. մարտի 13-ին դատավոր Վան. Ե-ի կայացրած բանավոր որոշմամբ Դոմբոյի առարկությունը մերժվել է: Որոշման համար հիմք էր հանդիսացել նախ այն փաստը, որ պրն վան Վ.-ն հանդիսանում է իրավասու վկա, քանի որ ընթացիկ գործով նա դատավարության կողմ չէ՝ ոչ պաշտոնապես, ոչ փաստացիորեն, եւ այն փաստը, որ պրն վան Վ.-ին որպես վկա լսելու պարագայում պրն վան Ռեյջենդամին որպես վկա չլսելու հետեւանքով Դոմբոն հայտնվել է անբարենպաստ վիճակում, չի կարող ենթադրել, որ պրն վան Վ.-ն այլեւս իրավասու վկա չէ:

Վերաքննիչ դատարանի դատավորն անմիջապես անցել է Բանկի վկաների լսումներին:

Վկաների լսումներից հետո կողմերը ներկայացրել են բազմաթիվ գրավոր միջնորդություններ, որոնցում նրանք վերլուծել են վկաների ցուցմունքները: Դոմբոն ներկայացրել է բազմաթիվ լրացուցիչ փաստաթղթեր, ներառյալ որպես վկա հանդես չեկած անձանց գրավոր ցուցմունքները: Բանկը նույնպես ներկայացրել է մի շարք այլ փաստաթղթեր: Ի պատասխան դրանց՝ Դոմբոն ներկայացրել է եւս մի քանի միջնորդություն:

19. 1986թ. մարտի 11-ին վերաքննիչ դատարանը կայացրել է իր վերջնական վճիռը: Նախապես այն մանրակրկիտ ուսումնասիրել է վկաների ցուցմունքները: Ինչ վերաբերում է պրն Յ.Յու-ի ցուցմունքներին (տես վերը՝ կետ 16), դատարանը նշել է, որ դրանք հակասում են իրար մի շատ կարեւոր կետում, այն է՝ վարկային հնարավորության ընդլայնման չափի հարցում, նաեւ ավելացրել է, որ այս հակասությունը, որի համար ոչ մի բացատրություն չի տրվել, բացասական ազդեցություն է թողել վկայի ցուցմունքների համոզիչ լինելու վրա: Այնուհետեւ վերաքննիչ դատարանն ուսումնասիրել է Դոմբոյի կողմից ներկայացված՝ երդմամբ հաստատված մի քանի վկայություններ:

Դրանցից երկուսը մերժվել են, քանի որ ստորագրված չէին: Իսկ ինչ վերաբերում է պրն վան Ռեյչենդամի կողմից ստորագրված՝ երդմամբ հաստատված վկայությանը, դրան դատարանը վերաբերվել է այնպես, ինչպես վերաբերվել էր Դոմբոյի վկայությանը:

Դատարանն այնուհետև որոշել է.

«Վերաքննիչ դատարանն այն կարծիքին է, որ լսումների ընթացքում Դոմբոն չի կարողացել ներկայացնել անհրաժեշտ ապացույցներ: Դ. Գ. եւ Օ. վկաների կողմից բերված ցուցմունքները հստակ չեն, իսկ Յ.Յու.-ի ցուցմունքները եւ Ս.-ի նոտարական կարգով հաստատված ցուցմունքները, որը որպես նոտար աշխատել է 1981թ. մայիսի 12-ից, հակասում են վան Վ.-ի եւ Կ.-ի վկայություններին: Այն փաստը, որ չի ներկայացվել ոչ մի գրավոր ապացույց Դոմբոյի մատնանշած նման կարելու համաձայնագրի վերաբերյալ, ստիպում է Վերաքննիչ դատարանին խստորեն վերաբերվել ապացույցներին. սա նույնպես պետք է հաշվի առնել:

Դատաքննության ընթացքում հաստատվել է, որ 1980թ. դեկտեմբեր եւ 1981թ. հունվար ամիսների ընթացքում Բանկը, ըստ էության, համաձայնել է ընդլայնել Դոմբոյի վարկային հնարավորությունը՝ տրամադրելով գրավոր համաձայնագրերում ամրագրված քանակից ավելի շատ գումար: Բայց սրանից անհրաժեշտորեն չի բխում, թե Դոմբոն միանշանակորեն իրավունք ուներ օգտագործել այդ գումարները, իսկ Բանկը չէր կարող ինչ-ինչ պատճառներով ժամանակավոր արգելք դնել ընդլայնված վարկային հնարավորության վրա: Չնայած այն դյուրինությանը, որով Բանկը համաձայնել էր ընդլայնել Դոմբոյի վարկային հնարավորությունը՝ գերազանցելով պաշտոնապես գործող չափը, մտածելու տեղիք է տալիս՝ սա

կարելի է բացատրել վարկային հնարավորության սահմանի նկատելի ընդլայնման վերաբերյալ կողմերի միջև բանակցություններով, որոնց մասին պարզ է դարձել դատավարության ընթացքում, որտեղ խոսքը գնացել է 2,600,000 գուլդեն գումարի մասին:

Վան Վ.-ի ցուցմունքներից պարզ է դառնում նաեւ (Դոմբոն չի առարկել սրա դեմ), որ 1981թ. հունվարի վերջին Դոմբոյի գործադիր տնօրենը, մոլորության մեջ գցելով վան Վ.-ին, երկու անգամ հաջողացրել է դուրս գրել պաշտոնապես համաձայնեցված վարկային հնարավորության սահմանը գերազանցող գումարներ: Բանկը, հետեւաբար, իրավունք ուներ պատճառաբանված կերպով ժամանակավորապես դադարեցնել Դոմբոյի վարկային սպասարկումը»:

Վերաքննիչ դատարանն այնուհետեւ նշել է, որ քանի որ համաձայնագրի առկայությունը չի ապացուցվել, անհնաստ է քննարկել այն հարցը, թե արդյոք Բանկն իրականում սառեցրել է Դոմբոյի հաշիվները՝ ի խախտումն այդ համաձայնագրի, եւ, հետեւաբար, մերժել է Դոմբոյի հայցը:

20. 1986թ. հունիսին Դոմբոն իրավունքի հարցերով բողոք է ներկայացրել Գերագույն դատարան (Hoge Raad): Բողոքի հիմքերի շարադրման (middel van cassatie) 2-րդ կետը մասնավորապես ուղղված էր դատավոր վան Ե.-ի կողմից ընդունված որոշման դեմ, ըստ որի՝ դատավորը մերժել էր լսել պրն վան Ռեյչենդամին՝ որպես Դոմբոյի վկա, իսկ պրն վան Վ.-ին թույլատրել էր հանդես գալ որպես վկա՝ Բանկի կողմից: Այդ կետում, inter alia, նշվում է.

«Բացի դրանից, վերաքննիչ դատարանի որոշումները՝ մեկը մյուսի հարաբերությամբ, համաձայն Կոնվենցիայի [Կոնվենցիա] 6-րդ հոդվածի՝ սխալ են, որը յուրաքանչյուրին իր քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները որոշելիս երաշխավորում է իր գործի արդարացի քննություն: Ի վերջո, Կոնվենցիայի այս դրույթը ենթադրում է, որ կողմերը

պետք է ունենան պայքարի հավասար հնարավորություններ («միջոցների հավասարություն»), եւ որ քաղաքացիական դատավարության յուրաքանչյուր կողմ պետք է հնարավորություն ունենա դատարանին իր գործը ներկայացնելու այնպիսի պայմաններում, որոնք նրան չեն դնում բացահայտ անբարենպաստ վիճակում՝ հակառակ կողմի համեմատությամբ»:

21. Գլխավոր փաստաբանը (advocaat-generaal) 1988թ. հունվարի 8-ի իր խորհրդատվական կարծիքում (conclusie) ձեւակերպել է, որ Դոմբոն ճիշտ էր պնդում, որ «համաձայն առկա իրավական կարծիքի», եթե անձը «ճանաչվել է որպես կողմ», ապա պետք է ցուցնու՞նքներ տալու հնարավորություն ունենա: Այս տեսակետը հիմնավորելու համար նա հղում է կատարել քաղաքացիական դատավարությունում ապացույցների վերաբերյալ նոր օրենքին, որն արդեն ընդունվել էր Խորհրդարանի կողմից (տես ստորեւ՝ կետ 27): Որպես այս տեսակետի օգտին բերվող եւս մի փաստարկ նշվում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը, որի վրա Դոմբոն կարող էր պատշաճ կերպով հիմնվել: Սրա հետ կապված նա, *inter alia*, պնդել է, որ՝

«Տվյալ գործում խնդիրը կայանում էր նրանում, որ պրն վան Վ.-ին հնարավորություն էր ընձեռվել արտահայտվել դատարանում 1980թ. դեկտեմբերին պրն վան Ռեյջենդամի հետ տեղի ունեցած (կամ չու՞նեցած, նայած թե ինչ է տեղի ունեցել) քննարկումների եւ ձեռք բերված համաձայնությունների վերաբերյալ (նրա ցուցմունքները կազմում էին չորս էջ՝ պաշտոնական փաստթղթերի տեսքով, եւ երկու էջ՝ վերաքննիչ դատարանի վճռում), մինչդեռ պրն վան Ռեյջենդամին հնարավորություն չէր տրվել հայտնել դրա վերաբերյալ իր տեսակետը: Այն դեպքում, երբ Դոմբոյի գործի հաջողությունը կախված էր դրանից»:

Այնուհետեւ նա խորհուրդ է տվել բավարարել Դոմբոյի բողոքը:

22. Գերագույն դատարանը մերժել է Դոմբոյի բողոքը 1988թ. փետրվարի 19-ին: Այն մերժել է Դոմբոյի՝ «առկա իրավական կարծիքի» վրա հիմնված փաստարկները՝ գտնելով, որ ըստ ապացույցների մասին գործող օրենքի՝ կողմերն իրենց իսկ գործում որպես վկա հանդես գալու իրավունք չունեն, այնպես որ հնարավոր չէր կանխատեսել նոր օրենքի ուժի մեջ մտնելը, որը բացարձակապես այլ կառուցվածք ունի: Դատարանը նաեւ մերժել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի վրա հիմնված բողոքը: Ըստ Գերագույն դատարանի՝ սա հիմնված էր այն փաստարկի վրա, որ վերաքննիչ դատարանը խախտել է այն սկզբունքը, որ «երկու կողմերի դատավարական իրավունքները պետք է հավասար լինեն»: Ըստ Գերագույն դատարանի՝ փաստարկման այս գիծը՝

«... չի ընդունում, որ դատավորը, որն օժտված է փաստի հարցերը որոշելու իրավունքով, վկաների ցուցմունքների վստահելիությունը գնահատելիս ազատ է հաշվի առնելու դատավարության կողմերից մեկին վկայի առնչակցության բնույթն ու աստիճանը, եւ որ նա նաեւ պետք է վկայի ցուցմունքները գնահատի դատավարության մյուս կողմի գրավոր միջնորդությունների կամ դատարանում անձամբ ներկայացրած միջնորդությունների տեսանկյունից»:

III. Համապատասխան ներպետական օրենսդրությունը եւ պրակտիկան

Ա. Կողմերը որպես վկաներ, ընդհանրապես. նախկին օրենքը

23. 1988թ. ապրիլի 1-ին քաղաքացիական գործերում ապացույցների վերաբերյալ նոր նորմերի ուժի մեջ մտնելուց առաջ (տես ստորեւ՝ կետ 27) քաղաքացիական գործերում ապացույցները կարգավորվում էին Քաղաքացիական օրենսգրքով (ՔՕ) (Burgerlijk Wetboek-CC) եւ Քաղաքացիական դատավարության օրենսգրքով (ՔԴՕ) (Wetboek van Burgerlijke - CCP), որոնք երկուսն էլ ընդունվել էին 1838թ. եւ մեծապես հիմնված էին համապատասխան ֆրանսիական օրենսգրքերի վրա:

Նախկին օրենքը, որն ուժի մեջ էր քննության առարկա դատավարության ընթացքում, այդքան շատ բառերով չէր ամրագրում, որ գործին մասնակից անձին թույլ չէր տրվում վկայություն տալ: Այնուամենայնիվ, ընդունված էր, որ Գերագույն դատարանի խոսքերով՝ «Նիդեռլանդների քաղաքացիական դատավարության իրավունքի սկզբունքներից մեկն այն է, որ այն անձը, ով ձեւականորեն կամ էականորեն մասնակից է վեճին, չի կարող որպես վկա հանդես գալ իր գործում» (1963թ. փետրվարի 1-ի որոշում, ՆՕ (Նիդեռլանդների օրենսդրություն), (Nederlandshe Jurisprudentie, Նիդեռլանդների օրենսդրության զեկուցագրեր), 1964, 157): Այս տեսակետը, inter alia, հիմնված էր ՔՕ 1947-րդ հոդվածի 1-ին կետի վրա, համաձայն որի՝ կողմերի՝ արյունակցական կամ անուսնական կապերով ուղղակի հարազատները, ամուսինները եւ նախկին ամուսիններն իրավունք չունեին հանդես գալ որպես վկաներ:

Այն նորմը, որ փաստացի կողմին թույլ չէր տրվում վկայություն տալու, մշտապես հաստատվել է եւ խստորեն կիրառվել Գերագույն դատարանի կողմից, ինչպես վկայում են 1953թ. մայիսի 22-ի ՆՕ 1953, 647, 1963թ. փետրվարի 1-ի ՆՕ 1964, 157, 1973թ. հունվարի 5-ի ՆՕ 1973, 106 վճիռները եւ նաեւ այն վճիռները, որոնց կանդիդատներն ստորել՝ կետ 25-ում:

24. Ինչեւէ, սրանից չէր բխում, որ դատարանները հնարավորություն չունեին լսելու կողմերին անձնապես: Դատարաններն ունեին հետեւյալ հնարավորությունները.

(ա) «Վճռական երդում»-ը եւ «լրացուցիչ երդում»-ը ինքնին ներառում էին դատավարության կողմին երդման միջոցով լսելը.

i) Մի կողմը կարող է պահանջել, որ մյուս կողմը երդմամբ հաստատի որոշակի վիճարկվող փաստ: Եթե մյուս կողմը երդվում է, ապա հակառակն ապացուցելն այլեւս անընդունելի է, եթե նա հրաժարվում է, ապա հակառակ պնդումն ընդունվում է որպես ճշմարտություն: Սա «վճռական երդումն» էր (beslissende eed) (ՔՕ, 1967-1976-րդ հոդվածներ):

ii) Դատարանը նաեւ հնարավորություն ուներ կարգադրելու՝ իր նախաձեռնությամբ կամ կողմերից մեկի խնդրանքով, որ կողմերից մեկը կամ մյուսը «լրացուցիչ երդում» տա (aanvullende eed): Դատարանը այսպիսի երդում կարող էր պարտադրել այն կողմին, որը, իր կարծիքով, ամենահարմարն էր այդ նպատակով, եթե միայն ցուցմունքները, որոնց վերաբերում էր երդումը, ո՛չ ապացուցված էին, ո՛չ էլ ամբողջովին հիմնավորված (ՔՕ, հոդվածներ 1977 եւ 1978):

Հիմնականում այս լրացուցիչ երդումն էր, որի վրա հաճախ կողմերը հույս էին դնում, երբ կար հավանականություն, որ իրենց ապացույցներն անբավարար կլինեն, նրանք դատարանից թույլտվություն կխնդրեին իրենց ապացույցները լրացնել այս կարգով, եթե դատարանն ինքը դա անբավարար կհամարեր:

(բ) Դատարաններն ունեին նաեւ երեք հնարավոր ձեւեր լսելու այն կողմերին, որոնք կապված չեն երդման հետ.

i) Մի կողմի խնդրանքով մյուս կողմի՝ «գործին առնչվող կետերը քննելով» (verhoor op vraagpunten) (ՔԴՕ, հոդվածներ 234-247): Նման քննություն պահանջող կողմը պետք է նախապես ներկայացնի իր հարցերը. ինչեւէ, դատարանը, ինչպես եւ քննությունը պահանջող կողմը, իրավունք ուներ լրացուցիչ հարցեր տալու, որոնք ծագում էին քննության ժամանակ:

ii) Իր նախաձեռնությամբ կամ կողմերից մեկի խնդրանքով պահանջելով, որ կողմերն անձնապես ներկա գտնվեն, տեղեկություն ստանալու համար (comparitie tot het geven van inlichtingen) (ՔԴՕ, հոդված 19ա): Սկզբունքորեն, նման հրամանը երկու կողմերի ներկայության համար էր:

- iii) Բանավոր միջնորդության դեպքում ՔԴՕ 20-րդ հոդվածը թույլ էր տալիս կողմերին ինքնուրույն ներկայացնել իրենց գործը, բայց սա շատ հազվադեպ էր պատահում. այնուամենայնիվ, կողմերը հաճախ ներկա էին գտնվում բանավոր միջնորդությունների ժամանակ, եւ դատարանը հնարավորություն էր ունենում հարցաքննել նրանց (ՔԴՕ, հոդված 144, կետ 2):

Ենթադրվում է, որ այս երեք դեպքերում արված հայտարարությունները չեն հանդիսանում ապացույց՝ հօգուտ դրանք ներկայացնող կողմի:

Բ. Իրավաբանական անձինք

25. Եթե դատավարության մի կողմն իրավաբանական անձ է, ապա որպես վկա հանդես գալն արգելող նորմը կիրառվում էր ցանկացած ֆիզիկական անձի նկատմամբ, ով պետք է հանդես գար որպես շահագրգիռ անձ:

Ֆիզիկական անձը դիտվում էր որպես իրավաբանական անձ, եթե դատավարության ժամանակ հանդես է եկել որպես դրա ներկայացուցիչ (ինչպես, *inter alia*, երեւում է Գերագույն դատարանի 1913թ. հունիսի 27-ի, ՆՕ 1913, էջ 865, 1916 թ. ապրիլի 28-ի ՆՕ 1916, էջ 786, 1922թ. հունվարի 19-ի, ՆՕ 1922, էջ 319, 1969թ. հունվարի 17-ի ՆՕ 1969, 251 որոշումներից), կամ եթե նա օրենքով կամ կանոնադրությամբ իրավասու էր հանդես գալու որպես օրինական ներկայացուցիչ (տես, *inter alia*, Գերագույն դատարանի 1942թ. հունվարի 9-ի ՆՕ 1942, 302, 1973թ. հունվարի 12-ի ՆՕ 1973, 104, 1979թ. հոկտեմբերի 26-ի ՆՕ 1980, 486, 1984թ. նոյեմբերի 18-ի ՆՕ 1984, 256 որոշումները):

26. Արդյոք անձին որպես վկա որակելը պետք է որոշվեր այն իրադրության լույսի ներքո, երբ նա պետք է ցուցնունք տար: Այս ընդհանուր նորմի համաձայն՝ սովորաբար ենթադրվում է, որ իրավաբանական անձի նախկին տնօրենը, որին այդ պաշտոնը զբաղեցնելու ընթացքում արգելվում էր վկայություն տալ, որակվել էր որպես վկա, պաշտոնից հեռացվելուց հետո (տես, *inter alia*, Գերագույն դատարանի 1985թ. հունիսի 28-ի ՆՕ 1985, 888 որոշումը): Այնուամենայնիվ, այլ է իրավիճակը, երբ շահագրգիռ անձն իրականում չէր կորցրել իր պաշտոնն իրավաբանական անձի ներսում եւ որտեղից նրա հեռացումը պետք է դիտվեր որպես կեղծիք (*schijnhandeling*) (տես, *inter alia*, Գերագույն դատարանի 1983թ. նոյեմբերի 18-ի ՆՕ 1984, 256 որոշումը և 1988թ. փետրվարի 19-ի որոշումը՝ հրատարակված տվյալ դեպքի մեկնաբանությամբ ՆՕ 1988, 725-ում):

Գ. Կողմերը որպես վկաներ. նոր օրենքը

27. Քաղաքացիական դատավարությունում ապացույցների մասին օրենքում էական փոփոխություններ էին կատարվել Շտացբալդի 1987թ. դեկտեմբերի 3-ի 590 օրենքով (*Official Gazette*), որն ուժի մեջ է մտել 1988թ. ապրիլի 1-ին:

Օրինագիծը, որի վրա հիմնված է նոր օրենքը, մշակվել է դեռեւս 1969թ: Օրինագծի ընդունման երկարատեւ ձգձգման պատճառը հակասական մոտեցումներն էին, որոնք ձեւավորվել էին այն հարցի շուրջ, թե վերոհիշյալ սկզբունքը, ըստ որի կողմերին պետք է արգելվի վկայություն տալը, պետք է վերացվի, թե փոխարենը պետք է ընդունել, որ կողմերը կարող են հանդես գալ որպես վկաներ: Պաշտամենտական քննարկումների ժամանակ սա մնաց թեժ բանավեճի առարկա եւ Պաշտամենտում, եւ դրանից դուրս, բայց, վերջիվերջո, որոշվեց հրաժարվել հին պրակտիկայից: Այժմ ՔԴՕ 190-րդ հոդվածը կողմերին

թույլ է տալիս հանդես գալ որպես վկա իրենց իսկ գործով: Ուստի վճռական եւ լրացուցիչ երդումները, որոնց անդրադարձել էինք 24-րդ կետի (ա) ենթակետում, դադարեցին գործել:

Այս օրենսդրության նախագծման պատմությունից երեւում է, որ այն գործերը, «որոնցում մի կողմի ներկայացրած ապացույցների անբավարարությունը հանգեցնում է իրավական անհավասարության», հատկապես թույլ են տալիս եզրակացնել, որ «կողմերին ցուցնունք տալու թույլտվության օգտին բերված փաստարկները պետք է ավելի ծանրակշիռ համարվեն, քան վախը կողմնակի ազդեցությունից եւ գնահատման հիմնախնդիրներից, որոնք պատահամբ, հավանական է, ի հայտ գան գործի վկաների այլ ցուցնունքներում»: Որպես նման իրավական անհավասարության օրինակ նշվեց, որ «կողմը, որը ֆիզիկական անձ է՝ զրկված վկա լինելու իրավունքից, կարող է վեճ ունենալ (օրինակ) իրավաբանական անձ հանդիսացող կողմի հետ, որն իրավասու է ներկայացնելու դատարանում «երրորդ անձանց», չնայած այս վկաների վստահելիությունը նույնքան կասկածելի է՝ նկատի ունենալով նրանց սերտ կապերն այդ կողմի կամ դատավարության հետ:

Դժվար է հասկանալ, թե ինչու դատավարության կողմ հանդիսացող մի անհատի թույլատրվում է դատարանում երդման ներքո ցուցնունք տալ, իսկ մյուսին՝ ոչ: Սա անգամ կիրառվում է անկախ ապացույցների անբավարարությունից, այն իմաստով, որ որեւէ այլ ապացույց գոյություն չունի» (Parlementaire Geschiedenis Nieuw Bewijsrecht, Ապացույցների վերաբերյալ նոր օրենքի պառլամենտական նախագծման պատմություն, էջ 189-190):

Պետք է ասել, որ տվյալ դատավարության կողմ հանդիսացող եւ կողմ չհանդիսացող վկաների միջեւ տարբերությունը դեռ շարունակում է գոյություն ունենալ: Այս նպատակով բավական է նշել, որ ՔԴՕ 213-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ այն վկայի ցուցնունքը, ով հանդիսանում է դատավարության կողմ՝ «կապված իր կողմից ապացուցվելիք փաստերի հետ, չի կարող հանդիսանալ ապացույց, եթե այն չի լրացնում ոչ լիարժեք ապացույցը»:

Վարույթը Հանձնաժողովում

28. 1988թ. օգոստոսի 18-ին Դոմբոն դիմել է Հանձնաժողովին: Նա հայտարարել է, որ այն պայմաններում, երբ հակառակ կողմի մասնաճյուղի մենեջերին լսել էին որպես վկա, դատարանների մերժումը՝ լսել իր տնօրենին (կամ նախկին տնօրենին) որպես վկա, անբարենպաստ վիճակ էր ստեղծել իր համար, ի տարբերություն հակառակ կողմի, ինչը հանդիսացել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված՝ «միջոցների հավասարության» սկզբունքի խախտում:

29. 1991թ. սեպտեմբերի 3-ին Հանձնաժողովը N 14448/88 զանգատն ընդունելի է հայտարարել: 1992թ. սեպտեմբերի 9-ի (հոդվ. 31-ի համաձայն) զեկույցում այն կարծիքն է արտահայտել՝ 14 կողմ և 5 դեմ ձայներով, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում: Հանձնաժողովի տեսակետի ամբողջական տեքստը եւ դրանում արտահայտված անհամաձայնությունն այս դատավճռին լրացում է հանդիսանում:

Իրավունքի հարցեր

- I. 6-րդ հոդվածի 1-ին կետի վիճարկվող խախտում

30. Դիմող ընկերության գանգատը վերաբերել է ներպետական դատարանների կողմից՝ իր նախկին գործադիր տնօրեն պրն վան Ռեյչենդամին վկայություն տալ չթույլատրելուն, մինչդեռ Բանկի մասնաճյուղի մեներջեր պրն վան Վ.–ն, որը բանավոր համաձայնության ժամանակ միակ ներկա մարդն էր, հնարավորություն էր ունեցել վկայություն տալ: Այս կապակցությամբ ներպետական դատարանները դրա հետևանքով չեն պահպանել «միջոցների հավասարության» սկզբունքը՝ խախտելով «արդար դատաքննության» իրավունքը՝ ամրագրված 6-րդ հոդվածի 1-ին կետում, որտեղ ասված է.

« Յուրաքանչյուր ոք, երբ որոշում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները..., իրավունք ունի արդար... դատաքննության...»:

Այս տեսակետը ներկայացվել է Հանձնաժողովի կողմից, բայց դրան առարկել է Կառավարությունը:

31. Դատարանը նախեստառաջ նշում է, որ ինքը կոչված չէ ընդհանուր առմամբ որոշելու, թե արդյոք թույլատրելի է բացառել քաղաքացիական դատավարությունում այն անձի ցուցմունքը, որը տվյալ գործում կողմ է հանդիսանում:

Դատարանը ոչ էլ կոչված է in abstracto քննության առնելու քաղաքացիական դատավարության վերաբերյալ Նիդեռլանդների օրենսդրությունը: Դիմող ընկերությունը չի պնդում, որ օրենքն ինքնին խախտում է Կոնվենցիան, բացի դրանից, օրենքը, որի հիման վրա վիճարկվող որոշումներն ընդունվել են, այդ օրվանից փոխվել է: Ամեն դեպքում, վկաների իրավասությունը գլխավորապես կարգավորվում է ներպետական օրենսդրությամբ (տես վերջին հեղինակավոր աղբյուրները եւ, mutatis mutandis, Լյուդին ընդդեմ Շվեյցարիայի 1992թ. հունիսի 15-ի վճռի, Ա Շարքերի N 328, էջ 20, կետ 43 և Շուլեր–Չորագենն ընդդեմ Շվեյցարիայի 1993թ. հունիսի 24-ի վճռի Ա Շարքերի N 263, էջ 21, կետ 66):

Դատարանի իրավասության շրջանակում չէ ներպետական դատարանների կողմից փաստերի գնահատումը փոխարինել իր իսկ գնահատականով: Դատարանի խնդիրն է համոզվել, որ դատավարությունը՝ ամբողջությամբ, ներառյալ ապացույցների թույլատրելիության ձևը, լինեն «արդարացի»՝ 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով (տես, inter alia եւ mutatis mutandis, վերոհիշյալ վճիռները):

32. «Արդարացի դատաքննություն» հասկացությանը հատուկ պահանջները քաղաքացիական իրավունքների եւ պարտականությունների վերաբերյալ գործերում անպայմանորեն նույնը չեն, ինչ քրեական մեղադրանքը որոշելու հետ կապված գործերում: Սա հաստատվում է այնպիսի մանրամասն դրույթների բացակայությամբ, ինչպիսիք են 6-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերը, որոնք վերաբերում են առաջին կատեգորիայի գործերին: Այսպիսով, չնայած այս դրույթներն ունեն որոշակի պատշաճություն քրեական իրավունքի խիստ սահմաններից դուրս (տես, mutatis mutandis, Ալբերտը եւ Լե Կոմպտեն ընդդեմ Բելգիայի գործով 1983թ. փետրվարի 10-ի վճիռը, Ա Շարքեր, N 58, էջ 20, կետ 39), պայմանավորվող պետությունները գործելու ավելի լայն շրջանակներ ունեն, երբ խոսքը վերաբերում է քաղաքացիական իրավունքներին եւ պարտականություններին վերաբերող գործերին, քան, երբ խոսքը վերաբերում է քրեական գործերին:

33. Այնուամենայնիվ, որոշ սկզբունքներ՝ կապված քաղաքացիական իրավունքների եւ պարտականությունների վերաբերյալ գործերում «արդար դատաքննության» հասկացության հետ, ծագում են Դատարանի նախադեպային իրավունքից: Ներկա գործի համար ամենաեականն այն է, որ

պարզ է, որ «միջոցների հավասարության» պահանջը՝ կողմերի միջև «արդար հավասարակշռության» իմաստով, սկզբունքորեն կիրառվում է նման գործերում, ինչպես եւ քրեական գործերում (տես Ֆելդբրյուզեն ընդդեմ Նիդեռլանդների գործով 1986թ. մայիսի 26-ի վճիռը, Ա Շարքեր, N 99, էջ 17, կետ 44):

Դատարանը համաձայն է Հանձնաժողովի հետ նրանում, որ ինչ վերաբերում է հակառակ մասնավոր շահեր ներառող դատավեճի՝ «միջոցների հավասարությունը» նշանակում է, որ յուրաքանչյուր կողմի պետք է ընձեռվի պատշաճ հնարավորություն ներկայացնելու իր գործը, ներառյալ ապացույցները, այնպիսի պայմաններով, որոնք նրա համար չեն ստեղծի անբարենպաստ վիճակ՝ ի հակադրություն իր հակառակորդի:

Յուրաքանչյուր կոնկրետ գործում ներպետական իշխանություններն են կոչված ապահովելու, որ պահպանվեն «արդար դատաքննության» պահանջները:

34. Տվյալ գործում դիմող ընկերության պարտականությունն է ապացուցել, որ իր եւ բանկի միջև եղել է բանավոր համաձայնություն՝ վարկային հնարավորություններն ընդլայնելու մասին: Միայն երկու մարդ էին ներկա գտնվել հանդիպմանը, որի ժամանակ ընդունվել էր այս համաձայնությունը, այսինքն՝ պրն վան Ռեյջենդամը, որը ներկայացնում է դիմող կողմին, եւ պրն վան Վ.–ն, որը ներկայացնում է Բանկը: Սակայն այս երկու առանցքային մարդկանցից միայն մեկին է թույլատրվել վկայություն տալ, եւ դա Բանկը ներկայացնողն էր: Դիմող ընկերությանը չի թույլատրվել կանչել իրեն ներկայացնող անձին, որովհետեւ վերաքննիչ դատարանը նրան նույնացրել էր դիմող ընկերության հետ:

35. Գործին վերաբերող բանակցությունների ժամանակ պրն վան Ռեյջենդամը եւ պրն վան Վ.–ն գործել են հավասար հիմքերով, երկուսն էլ լիազորված էին բանակցելու համապատասխան կողմերի անուններից: Ուստի, դժվար է հասկանալ, թե ինչու չպետք է նրանց երկուսին էլ թույլատրվեր վկայություն տալու:

Այսպիսով, դիմող կողմը դրվել է անբարենպաստ վիճակում՝ ի հակադրություն Բանկի, որի արդյունքում խախտվել է 6-րդ հոդվածի 1-ին կետը:

II. 50-րդ հոդվածի կիրառելիությունը

36. Կոնվենցիայի 50-րդ հոդվածի համաձայն՝

«Եթե Դատարանը գտնում է, որ Բարձր պայմանավորվող կողմի իրավական մարմնի կամ որեւէ այլ մարմնի որոշում կամ միջոցառում՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն հակասում է Կոնվենցիայում ամրագրված պարտավորություններին, եւ եթե նշված կողմի ներպետական օրենսդրությունը թույլ է տալիս այս որոշման կամ միջոցների հետեւանքների միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանի որոշմամբ, եթե անհրաժեշտ է, վնաս կրած կողմին տրամադրվում է արդարացի բավարարում»:

Ա. Նյութական եւ ոչ նյութական վնաս

37. Իր հուշագրում դիմող ընկերությունը խնդրում էր նյութական եւ ոչ նյութական վնասների հատուցում՝ առանց նշելու ճշգրիտ չափը: Հետագա փաստաթղթերում ավելի մանրամասն ներկայացնելով իր պահանջները, Դիմբոն նշել է, որ ինքը դրանք պատրաստ չի համարում որոշման համար: Նրա կարծիքով, անհրաժեշտ էր, որ Բանկի՝ վիճարկվող գործողությունների եւ

ներպետական դատարանների կողմից իր հայտերի մերժման արդյունքում պատճառված նյութական վնասը հաշվարկվի հաշվապահների կողմից. նմանատիպ հաշվարկները կարող են նաև ի հայտ բերել պատճառված ոչ նյութական վնասի չափը:

38. Դիմող ընկերությունը խնդրել է Դատարանին նախապես հատկացնել որոշակի գումար՝ կանխավճարի ձևով, որը, վերջիվերջո, պետք է վճարեր Կառավարությունը, ինչը բավական կլիներ ֆինանսական փորձագետներին լիազորելու՝ վնասների վերոհիշյալ հաշվարկները կատարելու համար: Որպես այլընտրանք նաև խնդրում էր հատուկ իրավաբանական օգնության ձևով որոշակի գումարի հատկացում, որը կբավականացներ սույն նպատակի համար: Որպես մեկ ուրիշ այլընտրանք՝ խնդրել է Դատարանին, որպեսզի 50-րդ հոդվածի հիման վրա իր պահանջների քննարկումը կազմակերպել այնպես, որ հնարավորություն տրվի իրեն՝ պահանջվող գումարը մեկ այլ տեղից ձեռք բերելու համար:

39. Կառավարությունը մեկնաբանել է, նախեւառաջ, որ ինքը համոզված չէ, որ ներպետական դատարանները վճիռ կկայացնեին դիմող ընկերության օգտին, եթե լսեին պրն վան Ռեյչենդամին, երկրորդը, որ սխալ կլիներ Կառավարության վրա թողնել դիմող ընկերության կրած այն վնասների պատասխանատվությունը, որը հիմնականում Բանկի գործունեության հետեւանք է:

Հանձնաժողովի պատվիրակն առաջարկել է, որ Դատարանը հաշվի առնի հնարավորությունների որոշակի կորուստը՝ որպես նյութական վնաս, եւ անհավասար վերաբերմունքի զգացումը՝ որպես ոչ նյութական վնաս, եւ գումար հատկացնի արդարության հիմքով:

40. Դատարանը գտնում է, որ այս պահանջների հարցը պատրաստ է կարգավորման համար:

Դիմող ընկերության տարբեր պահանջները՝ նյութական եւ ոչ նյութական հատուցման համար, որը պետք է որոշվի մեկ ենթավերնագրի ներքո, հիմնված են այն ենթադրության վրա, որ ինքը կշահեր դատը, եթե ներպետական դատարանները թույլատրած լինեին պրն վան Ռեյչենդամին վկայություն տալ: Դատարանը չէր կարող ընդունել այս ենթադրությունը՝ առանց ցուցմունքի իր գնահատման: Պրն վան Ռեյչենդամի՝ Արնհեմի վերաքննիչ դատարանում տված վկայությունը կարող էր հանգեցնել երկու հակադիր ցուցմունքների, որոնցից մեկը կարող էր ընդունվել մյուսի դեմ՝ հաստատող ապացույցի հիման վրա: Սարդու իրավունքների եվրոպական դատարանի խնդիրը չէ որոշել, թե որը պետք է ընդունվեր: Արդար բավարարման պահանջի այս մասը պետք է համապատասխանորեն մերժվի:

Բ. Դատական ծախքեր եւ ծախսեր

41. Դիմող ընկերությունը պահանջել է 12,948 գուլդեն փոխհատուցում՝ Արնհեմի վերաքննիչ դատարանում դատական ծախսերի եւ փաստաբանների հոնորարների համար: Այնուհետեւ դիմող ընկերությունը պահանջել է ընդհանուր 48,244.51 գուլդեն՝ նվազեցրած Ստրասբուրգի հաստատություններում իր գործը ներկայացնելու համար ստացած իրավաբանական օգնության գումարը:

Հանձնաժողովի պատվիրակը դիտողություն չի արել: Կառավարությունը պարզապես նկատել է, որ այն ժամանակը՝ 133 ժամ, որը դիմող ընկերության փաստաբանները ծախսել էին գործի վրա, «կարծես թե ապշեցնող է»:

42. Դատարանը նշում է, որ ինչպես փոխհատուցման, այնպես էլ Արնհեմի վերաքննիչ դատարանում դատավարության հետ կապված ծախքերի եւ

ծախսերի փոխհատուցման պահանջները հիմնված են այն ենթադրության վրա, որ դիմող ընկերությունը կշահեր գործը, եթե պրն վան Ռեյչենդամը լսվեր որպես վկա (տե՛ս վերը, կետ 40): Ուստի այս պահանջը պետք է մերժվի նույն պատճառներով:

43. Ինչ վերաբերում է Ստրասբուրգի հաստատություններում դատավարության ծախսերին եւ ծախսերին, Դատարանը խելամիտ է համարում, արդար հիմքերով գնահատելով, դիմող ընկերությանը հատկացնել 40,000 գուլդեն՝ հանած 16,185 ֆրանսիական ֆրանկ՝ վճարված որպես իրավաբանական օգնություն:

Այնուամենայնիվ, Դատարանը պատշաճ չի համարում տոկոսներ պահանջելը, ինչպես դիմող ընկերությունն էր խնդրել:

Այս հիմքերով դատարանը

1. Վճռում է՝ 5 կողմ եւ 4 դեմ ձայնով, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում,
2. Միաձայն վճռում է, որ պատասխանող պետությունը պետք է դիմող ընկերությանը վճարի, եռամսյա ժամկետում, 40,000 գուլդեն՝ Ստրասբուրգի դատավարություններում ծախսերի եւ ծախսերի համար, հանած 16,185 (տասնվեց հազար հարյուր ութսունհինգ) ՖՖ, փոխակերպած հոլանդական արտարժույթի՝ վճռի կայացման օրվա դրությամբ կիրառելի փոխանակման կուրսով:
3. Միաձայն մերժում է արդարացի բավարարման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով եւ ֆրանսերենով, հրապարակված է դռնբաց նիստում՝ Մարդու իրավունքների պալատում, Ստրասբուրգ, 1993թ. հոկտեմբերի 27:

Ռոլֆ Ռիսդալ
Նախագահ

Մարկ-Անդրե Էյսեն
Բարտուղար

Համաձայն Կոնվենցիայի 51-րդ հոդվածի 2-րդ կետի եւ Կանոնակարգի 53-րդ կանոնի 2-րդ կետի՝ սույն վճռին կցված են պրն Մարտենսի չհամընկնող կարծիքը, որին միացել է պրն Փետիտին, պրն Բերնհարդտի և պրն Պեկանենի համատեղ չհամընկնող կարծիքը:

Դատավոր Մարտենսի չհամընկնող կարծիքը,
որին միացել է պրն Փետիտին

1. Կա երկու պատճառ, որի համար ես չեմ կարող համաձայնել վճռին:
Դոմբոն բողոքում է Նիդեռլանդների դատարանների կողմից՝ քաղաքացիական դատավարությունում ապացույցների մասին ներպետական օրենքի այն նորմի կիրառման դեմ, ըստ որի՝ «անձը, ով ձեւականորեն կամ էականորեն հանդիսանում է դատավեճի կողմ, չի կարող լսվել որպես վկա իր իսկ գործով»:

Իմ կարծիքով՝ (A) այս նորմը՝ որպես այդպիսին, անհամատեղելի չէ Կոնվենցիայի հետ, հատկապես արդար դատաքննության իմաստով, եւ (B) դրա կիրառումը in concreto չի խախտում միջոցների հավասարության սկզբունքը:

Ա.

2. Դատարանն իր հիմնավորումը սկսել է՝ նշելով, որ «ինքը կոչված չէ ընդհանուր առմամբ որոշելու, թե արդյոք թույլատրելի է բացառել այն անձի ցուցմունքը, որը տվյալ քաղաքացիական գործում կողմ է» (31-րդ կետ), եւ ուստի, հրաժարվել է in abstracto քննել, թե արդյոք քաղաքացիական դատավարությունում ապացույցների մասին Նիդեռլանդների օրենքի վերոհիշյալ դրույթը համատեղելի է Կոնվենցիայի հետ: Այնուամենայնիվ, Դատարանը չէր կարող անտեսել այս հարցերը, քանզի Նիդեռլանդների դատարանների՝ պրն վան Ռեյչենդամի վկայությունը լսելու մերժումը ապացույցների մասին համապատասխան նորմի կիրառման բացահայտ արդյունք էր:

Դատարանը ձեռնպահ է մնում հաստատելուց, արդյոք Դոմբոյի եւ Բանկի միջեւ դատավարությունը՝ «ամբողջությամբ, ներառյալ ապացույցների թույլատրելիության ձեւը, «արդար» էին՝ 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով»: Հարցին բացասական պատասխանելու Դատարանի վճռական փաստարկն այն է, որ.

«Գործին վերաբերող բանակցությունների ժամանակ պրն վան Ռեյչենդամը եւ պրն վան Վ.–ն գործել են հավասար հիմքերով, երկուսն էլ լիազորված էին բանակցելու համապատասխան կողմերի անունից: ՈՒստի, դժվար է հասկանալ, թե ինչու չպետք է նրանց երկուսին էլ թույլատրվեր վկայություն տալու» (տե՛ս վճռի 35-րդ կետը):

Այնուամենայնիվ, գործին առնչվող ժամանակում Նիդեռլանդներում գործող՝ ապացույցների մասին օրենսդրության համաձայն չենք կարող պնդել, որ պրն վան Ռեյչենդամը եւ պրն վան Վ.–ն գործել են «հավասար հիմքերով»: Պրն վան Վ.–ն պարզապես գործատուին ներկայացնող աշխատակից էր, մինչդեռ պրն Ռեյչենդամը նույնացվել է Դոմբոյի հետ՝ այդ ժամանակ լինելով ոչ միայն դրա միակ գործադիր տնօրենը, այլ նաեւ, անուղղակի ձեւով, միակ բաժնետերը: Քանի որ վերոհիշյալ դրույթը հիմնված է անհերքելի կանխավարկածի վրա, որ «վկայի տված՝ իր գործին առնչվող» վկայությանը չպետք է վստահել, պրն վան Վ.–ի և պրն վան Ռեյչենդամի դերերի միջեւ տարբերությունը վճռական եւ բավարար բացատրություն է, թե «ինչու չպետք է երկուսին էլ թույլատրվեր ցուցմունք տալ»:

Այլ կերպ ասած՝ բոլոր իրադրություններում, որոնցում քաղաքացիական դատավարության կողմը պետք է հիմնականում, եթե ոչ բացառապես, հիմնվի իր իսկ հայտարարությունների վրա՝ հերքելու համար հակառակ կողմի կատարած եւ վկաներով հաստատած հայտարարությունները, քաղաքացիական դատավարությունում ապացույցների մասին Նիդեռլանդների օրենքի վերոհիշյալ նորմն անպայմանորեն այդ կողմին դնում է անբարենպաստ վիճակում՝ ի հակադրություն հակառակ կողմի, եւ այս հետևանքն է, որ, Դատարանի կարծիքով, արդարացնում է այն եզրակացությունը, որ խախտվել է միջոցների հավասարության սկզբունքը: Սա նշանակում է, որ Դատարանը in concreto դատապարտում է ոչ թե նորմի կիրառումը, այլ հենց նորմը:

3. Այնուամենայնիվ, ես խիստ կասկածում եմ՝ արդյոք այդ դատապարտումն արդարացված է: Նորմը, ըստ որի քաղաքացիական դատավարության կողմ հանդիսացող անձը չի կարող իր իսկ գործով լսվել որպես վկա, ակնհայտորեն հիմնված է այն տեսակետի վրա, որ նմանատիպ վկայությունը հատկապես անվստահելի է: Եվ դեռ ավելին, դա ակնհայտորեն գալիս է այն

ժամանակներից, երբ վկաների տված երդումն այնքան մեծ (կրոնական) նշանակություն ուներ, որ այն համարվում էր խիստ անհրաժեշտ՝ պաշտպանելու քաղաքացիական դատավեճի կողմին սուտ վկայությունից, եւ մյուս կողմին՝ այն հավանականությունից, որ դատավորը հարկադրված կզգա հավատալ հակառակ կողմի հայտարարությունները, քանի որ դրանք արվել էին երդման ներքո: Երկար ժամանակ այն նորմը, որ nemo in propria causa testis esse debet, ընդհանուր առմամբ ընդունվում էր եւ կազմում էր բոլոր եվրոպական պետություններում քաղաքացիական դատավարությունում ապացուցման մասին օրենսդրության մաս: Անցյալ դարի երկրորդ կեսից այն մերժվել է մի քանի երկրներում: Դատավարական նկատառումները, անկասկած, կարող են ներկայացվել որպես նմանատիպ բարեփոխումն արդարացնելու հանգամանք, սակայն այս նորմը դեռ կիրառվում է շատ եվրոպական պետություններում, օրինակ՝ Բելգիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Շվեյցարիայում, Իսպանիայում, Թուրքիայում, որոնք ակնհայտորեն նախընտրում են պահպանել ավանդական անվստահությունը դատական կողմի՝ իր իսկ գործով վկայություն տալու թույլտվության նկատմամբ:

Վերոհիշյալի հիման վրա, կարծում եմ, դժվար է քննադատել այդ նորմը՝ որպես անհամատեղելի արդարացի դատավարության հիմնական սկզբունքների հետ: Ամեն դեպքում, պետք չէ այդպես անել՝ առանց հաշվի առնելու ապացույցների մասին ներպետական օրենսդրությամբ ընձեռված այլ հնարավորությունները՝ քաղաքացիական դատավարության կողմին լսելու անձնապես և առանց որևէ փաստարկի, բացի այն, որ «դժվար է հասկանալ ինչու» կողմին չպետք է թույլատրել վկայություն տալ իր իսկ անունից:

Բ.

4. Ինչպես արդեն նշել եմ, Դատարանը նախեւառաջ որոշել է, թե արդյոք Դոմբոյի եւ Բանկի միջեւ դատավարությունները «ամբողջությամբ, ներառյալ ապացույցների թույլատրելիության ձևերը «արդար» էին՝ 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով»: Դատարանն այնուհետեւ առաջարկել է, որ «քաղաքացիական իրավունքներին եւ պարտականություններին առնչվող գործերում «արդար դատաքննության» գաղափարին վերաբերող սկզբունքների մեջ» «միջոցների հավասարության պահանջը» ամենաեականն է այս գործի առնչությամբ: Դատարանն այնուհետեւ նշում է, որ նման դատավարություններում «միջոցների հավասարությունը» նշանակում է, որ «յուրաքանչյուր կողմի պետք է տրվի նույնչափ հնարավորություն ներկայացնելու իր գործը, այդ թվում նաեւ ցուցմունքները, այնպիսի պայմաններում, որոնք նրան փաստացի անբարենպաստ վիճակում չեն դնում հակառակ կողմի առջեւ»:

Այս վերջին բառերի ընտրությունն այնքան էլ հաջող չէ, քանզի կարելի է հասկանալ, իբրեւ թե «միջոցների հավասարության» գաղափարն ունի գործին առնչվող իմաստ, թե այն պետք է նաև հանգեցնի դատավարական նորմերի մշակման, ինչպիսին են ապացույցների մասին նորմերը, որպեսզի երկու կողմերի համար ապահովվեն հաջողության հասնելու փաստացի հավասար հնարավորություններ, մինչդեռ քաղաքացիական իրավունքներին եւ պարտականություններին առնչվող դատավեճում «միջոցների հավասարության» գաղափարն ունի միայն ձևական իմաստ. երկու կողմերն էլ պետք է ունենան հավասար հնարավորություն՝ Դատարանին ներկայացնելու իրենց գործը, ինչպես նաև փաստարկներն ու ապացույցները:

Սակայն ես ընդունում եմ, որ Դատարանը նույն տեսակետն ունի, եւ միայն բառերի այս ձեւն է ներկայացրել որպէս տեստ, որոշելու, թէ երբ չի կարելի ասել, որ երկու կողմերն ունեցել են հավասար հնարավորություններ ներկայացնելու իրենց փաստարկներն ու ապացույցները:

Իմ կարծիքով, Դոմբոյին իսկապէս տրվել էր նման հնարավորություն:

5. Երկու կողմերն էլ ունեցել են լայն եւ հավասար հնարավորություն ներկայացնելու իրենց գործը գրավոր, ինչպէս նաեւ ունեցել են նույն հնարավորությունները ներկայացնելու իրենց ապացույցները: Երկու կողմերն էլ ներկայացրել են փաստաթղթեր եւ կանչել են վկաներ:

Շշմարիտ է, որ Բանկը կարողացել է որպէս վկա դատակոչել իր բանակցողին (պրն վան Վ.-ին), մինչդեռ Դոմբոն հնարավորություն չի ունեցել կանչելու իր բանակցողին՝ պրն վան Ռեյչենդամին: Սակայն հիմքեր կան ասելու, որ սա Դոմբոյին «էական անբարենպաստ վիճակի մեջ չի դրել՝ ի հակադրություն» Բանկի:

Նախեւառաջ, Նիդեռլանդների օրենքի համաձայն՝ դատարանները լիովին ազատ են վկաների ցուցմունքների՝ իրենց գնահատման մեջ: Այսպիսով, ներպետական դատարաններն ազատ էին հաշվի առնելու այն փաստը, որ պրն վան Վ.-ն մասնագիտության բերումով ներգրավված էր Բանկում եւ ուստի որոշակի շահագրգռություն ուներ դատավարության արդյունքում: Նմանապէս նրանք ազատ էին անտեսելու պրն վան Ռեյչենդամի կատարած հայտարարությունները, եթէ նրան թույլ տրված լիներ վկայություն տալ: Հետեւաբար, չի կարելի ասել, որ այն փաստը, որ պրն վան Վ.-ին թույլատրվել էր վկայություն տալ, իսկ պրն վան Ռեյչենդամին՝ ոչ, Դոմբոյին դրել էր էականորեն անբարենպաստ վիճակում:

Եվ ավելին, եթէ Արնհեմի վերաքննիչ դատարանը վճռած լիներ, որ Դոմբոյի ներկայացրած փաստերի տարբերակը, չնայած ներկայացրած ապացույցներով ոչ ամբողջությամբ ապացուցված, երկու ներկայացրածներից ավելի հավանականն է, այն կարող էր վճռած լիներ ինչպէս Դոմբոյի, այն պայմանով, որ պրն վան Ռեյչենդամը Դոմբոյի փաստերի տարբերակը հաստատեր երդման ներքո:

Շշմարիտ է, որ դատարանները «լրացուցիչ երդում» էին պահանջում, եթէ միայն նրանք երդում տվող մարդուն վստահելի էին համարում, եւ ճշմարիտ է նաեւ, որ որպէս վկա ցուցմունք տալու թույլտվություն ստանալու համար պրն վան Ռեյչենդամի կողմից կատարված խուսանավման փաստի պատճառով Արնհեմի վերաքննիչ դատարանը դժվար թէ նրան այդ որակական հատկանիշն ունեցող մարդ համարեր: Բայց սա էական չէ, ոչ միայն «*non auditur...*» (չեն լսվում) սկզբունքի տեսանկյունից, այլ նաեւ այն տեսանկյունից, որ ներկա փաստարկը վերաբերում է միայն Դոմբոյի հնարավորություններին՝ որպէս իրավունքի հարց:

6. Այս պատճառներով է, որ ես քվեարկել եմ ինչպէս այն բանի, որ իրավունքի խախտում չի եղել:

Դատավորներ Բերնհարդտի եւ Պեկանենի համատեղ չհամընկնող կարծիքը

Այս գործում մենք քվեարկել ենք 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման դեմ: Մեր կարծիքով, քաղաքացիական դատավարությունում միջոցների հավասարությունը պահանջում է համապատասխան նյութերը համապատասխան դատարանին ներկայացնելու հնարավորությունների հավասարություն: Այն դատավարությունում, որտեղ կողմն իրավաբանական

անձ է, վերջինիս ներկայացնող ցանկացած անհատ, համաձայն ներպետական դատավարական օրենսդրության, կարող է նույնացվել այդ իրավաբանական անձի հետ եւ այդ պատճառով զրկվել վկայի ֆորմալ կարգավիճակից: Մեր կարծիքով, վճռորոշն այն է, որ երկու կողմերն էլ` ինչպես փաստացի, այնպես էլ օրենքով, ներպետական դատարանի առջեւ ունենան միջոցների հավասարություն: Մենք համոզված ենք, որ Դոմբո Բեհիրը՝ այս գործում դիմողը, ունեցել է այս միջոցների հավասարությունը: Այս առումով մենք վկայակոչում ենք դատավոր Մարթենսի չհամընկնող կարծիքի 5-րդ կետը: